

Սոցիալական ձեռնարկատիրության համաժողով

2019թ., ապրիլ
Ամփոփիչ զեկույց

Սույն զեկույցն ամփոփում է Եվրամիության կողմից ֆինանսավորվող «Կառուցողական երկխոսության հանձնառություն» ծրագրի շրջանակում տրամադրված «Սոցիալական ձեռնարկատիրությունը համայնքային զարգացման մեխանիզմ» ենթադրամաշնորհային ծրագրի շրջանակներում «ԷկոԼաբ» կենսակայուն զարգացման և ակտիվ քաղաքացիության հիմնադրամի համաֆինանսավորմամբ և ԵՊՀ ձեռներեցության զարգացման կենտրոնի աջակցությամբ «Հայաստանի սոցիալական ձեռնարկությունների ասոցիացիայի» կողմից 2019թ-ի ապրիլի 26-ին Երևանի պետական համալսարանում կազմակերպված «Սոցիալական ձեռնարկատիրության համաժողովի» ընթացքում մասնակիցների կողմից ներկայացված տեսակետները, կարծիքները և առաջարկությունները:

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՒԹՅԱՆ ԷԿՈՀԱՄԱԿԱՐԳ

Սոցիալական ձեռնարկատիրության էկոհամակարգը Հայաստանում

- Հայաստանում սոցիալական ձեռնարկատիրության զարգացումը ներկայումս գտնվում է մի շարք միջազգային դոնոր կազմակերպությունների և տեղական հասարակական կազակերպությունների ուշադրության կենտրոնում: Առկա են մի շարք դոնորական ծրագրեր, որոնք ուղղված են սոցիալական ձեռնարկությունների և ոլորտային էկոհամակարգի զարգացմանը:
- Ներկայումս առկա են բազում կայացած ՍՁ-ներ, որոնք կարող են օրինակ ծառայել և որոնց մոդելը հնարավոր է տարածել Հայաստանի մյուս համայնքներում ևս՝ նպաստելով համայնքներում կայուն զարգացմանը:
- Համաձայն իրականացված հետազոտությունների՝ ՍՁ-ներին աջակցման մեխանիզմները բավարար են ինկուբացիայի փուլը ապահովելու համար. առկա են դրամաշնորհային ծրագրեր, որոնք ուղղված են ՍՁ համատեքստում բիզնես պլանների կազմմանը, գործունեության մեկնարկին: Այնուհանդերձ, ՍՁ-ների զարգացմանն ուղղված աջակցման մեխանիզմները դեռևս անբավարար են:

Հիմնախնդիրներ և բացեր

- Միջազգային ՍՁ ոլորտին Հայաստանի ինտեգրման գործընթացը դեռևս բավարար մակարդակի չէ: ՍՁ համագործակցային ցանցերը դեռևս բավարար չափով զարգացած և կայացած չեն:
- Սոցիալական ձեռնարկատիրության զարգացմանն ուղղված դոնորական աջակցությունը հիմնականում տրամադրվում է ձեռնարկությունների հիմնման նախասկզբնական և սկզբանական փուլերում: Հիմնված ձեռնարկությունները ձախողում են գործունեության հետագա փուլերում՝ պայմանավորված մարքեթինգային, բիզնեսի զարգացման գիտելիքների և հմտությունների պակասով:
- ՍՁ ոլորտի և ՏԻՄ-երի միջև համագործակցությունը և փոխօգնությունը դեռևս անբավարար մակարդակի վրա է՝ պայմանավորված ՏԻՄ-երի կողմից ՍՁ ոլորտի վերաբերյալ իրազեկվածության ցածր մակարդակով և ՏԻՄ գործունեության շրջանակներում սոցիալական հիմնախնդիրների նորարարական լուծումներից խուսափելու մոտեցմամբ:
- ՍՁ-ների ոլորտային կողմնորոշումը դեռևս նեղ է և սահմանափակված է մի շարք տիպային ոլորտներով:
- Համայնքային մակարդակում կարևոր հիմնախնդիր է մնում բնակչության մոբիլիզացիան ՍՁ գաղափարների շուրջ: Անձնային մակարդակում դեռևս խնդրահարույց է մնում բնակչության շրջանում նախաձեռնողականության բացակայությունը և փոփոխությունների հնարավորության նկատմամբ թերահավատությունը:
- ՍՁ ոլորտում հետազոտական աշխատանքների իրականացումը դեռևս ոչ բավարար մակարդակի վրա է, առկա չեն ոլորտային հիմնարար հետազոտություններ:

Զարգացման ուղղություններ

- Զարգացնել ՍՁ ոլորտի և ՏԻՄ-երի միջև համագործակցությունը՝ մի կողմից բարձրացնելով ՏԻՄ մարմինների իրազեկվածությունը ՍՁ ոլորտի վերաբերյալ, մյուս կողմից՝ համայնքներում ստեղծելով ակտիվ նախաձեռնող մարդկանց խմբեր:
- Ստեղծել ՍՁ այնպիսի ցանցեր և հարթակներ, որոնք հնարավոր կդարձնեն տարբեր սոցիալական ձեռնարկությունների միջև փորձի փոխանակումը և փոխօգնությունը:
- Միջազգային դոնորական օգնությունն ուղղել ոչ միայն ՍՁ-ների ինկուբացիոն փուլին, այլև աքսելերացիայի փուլին՝ օժանդակելով ՍՁ-ների կայացման և զարգացման փուլներում ևս:

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՒԹՅԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳ

«Սոցիալական ձեռնարկատիրություն» հասկացության շուրջ...

- ՍՁ-ն երկու ուղղությունների միախառնումն է՝ սոցիալականի ազդեցության ապահովման և ձեռնարկատիրական գործունեության իրականացման:
- ՍՁ հասույթի հիմնական մասը պետք է գոյանա ձեռնարկատիրական գործունեությունից՝ այսպիսով տարանջատելով այն հասարակական գործունեությունից:
- ՍՁ-ի հիմնական նպատակը սոցալական խնդրի լուծումն է հասարակությունում, համայնքում և երկրում:
- ՍՁ ստեղծելու նպատակը առաքելություն իրականացնելն է և ոչ թե գերշահույթներ ստանալը:
- Կարևոր է տարբերակել կորպորատիվ սոցիալական պատասխանատվություն ունեցող բիզնեսները ՍՁ-ներից:
- ՍՁ-ն միայն տնտեսական ոլորտի խնդիր չէ, այն մշակութաբանական, մտածողության, արժեքային բազայի փոփոխության, մարդկանց դեպի սոցիալական համերաշխության, սոցիալական արդարության արժեքներին մոտեցնելու ֆունկցիա ունի:
- ՍՁ-ի նպատակների իրականացումն անուղղակիորեն կամ ուղղակիորեն տանում է կանանց ներգրավածության ավելացման, աղքատության նվազման և մի շարք այլ խնդիրների լուծման:

Սոցիալական ձեռնարկատիրությունն իր մեջ ներառում է՝

- Հանրային համերաշխության մոդել՝ համատեղելով մրցակցային շուկան և հանրային շահը
- Ներառական միջավայրի ստեղծումը այն մարդկանց համար ովքեր մեկուսացած են հասարակությունից
- «Լավ կառավարման» սկզբունքը
- Ձեռնարկատիրական նոր մշակույթ՝ խրախուսելով բարեվարքությունը:

Հիմնախնդիրներ եվ բացեր

- ՀՀ կառավարությունը դեռևս չի ճանաչում ՍՁ-ն որպես տնտեսության մասնիկ, որը նպաստում է նաև սոցիալական խնդիրների լուծմանը:
- ՍՁ ոլորտում բացակայում է համակարգված քաղաքականությունը, պետության կողմից ՍՁ-ները դեռևս սահմանված չեն և այս ոլորտում չեն հավաքագրվում վիճակագրական տվյալներ:
- Կառավարության առանձին ներկայացուցիչներ դեռևս թերահավատ են սոցիալական ձեռնարկությունների մոդելի նկատմամբ՝ համարելով այն ոլորտ, որը մշտապես կախված է լինելու պետական ռեսուրսներից:

Զարգացման ուղղություններ

- Սոցիալական ձեռնարկություններին տրամադրվող խրախուսական համակարգը պետք է բացառի վերջինիս հնարավոր շահարկումը ավանդական բիզնեսի կողմից:
- ՍՁ հայեցակարգում որպես սոցիալական ձեռնարկությունների կարևոր բաղադրիչ սահմանել «կանաչ մտածողությունը»՝ համայնքներում կենտրոնանալով բնապահպանական և շրջակա միջավայրի հիմնախնդիրների լուծման վրա՝ առաջ անցնելով ՍՁ-ն որպես «միայն սոցիալական խնդիր լուծող կազմակերպություն» սահմանումից:
- Սոցիալական ձեռնարկատիրություն-պետություն երկխոսությունում փոխել պետության կողմից ՍՁ ընկալումը՝ «պետությունից օգնություն ակնկալող» ոլորտի ընկալումից դարձնելով պետությանը աջակից և սոցիալական հիմնախնդիրների լուծմանն ուղղված ոլորտ:

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՒԹՅՈՒՆԸ ՖՈՐՄԱԼ ԵՎ ՈՉ ՖՈՐՄԱԼ ԿՐԹԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐՈՒՄ

Սոցիալական ձեռնարկատիրության զարգացման կրթական բաղադրիչը

- ՍՁ հայեցակարգը էական անդրադարձ է կատարում ՍՁ կրթության տարածմանը՝ որպես ոլորտի զարգացման կարևոր մեխանիզմ:
- ԵՄ կողմից ֆինանսավորվող և Իրավաբանների հայկական ասոցիացիայի կողմից ղեկավարվող «Կառուցողական երկխոսության հանձնառություն» ծրագրի ենթադրամաշնորհի շրջանակներում Հայկական բիզնես կոալիցիան իրականացրել է 1) «Ձեռնարկատիրական կրթություն» դասընթացի ներդրման արդյունավետության գնահատում հանրակրթական դպրոցներում 2) ՍՁ կրթության ներդրման հնարավորությունների ուսումնասիրություն:
- «Կառուցողական երկխոսության հանձնառություն» դրամաշնորհային ծրագրի շրջանակներում Հայկական բիզնես կոալիցիան իրականացնում է ՍՁ կրթական մոդուլի մշակմանը և ներդրմանն ուղղված աշխատանքներ:
- ՍՁ զարգացման կրթական բաղադրիչի շրջանակներում մշակվել են ՍՁ վերաբերյալ մի շարք հայալեզու նյութեր և ձեռնարկներ:
- ՍՁ վերաբերյալ իրականացվում են մի շարք ֆորմալ և ոչ ֆորմալ կրթական ծրագրեր և դասընթացներ, որոնք մեծ հետաքրքրություն են առաջացնում շահակիցների շրջանում:

Հիմնախնդիրներ եվ բացեր

- Թեև իրականացվել են ՍՁ վերաբերյալ մի շարք հայալեզու նյութերի պատրաստման աշխատանքներ, սակայն դեռևս հայերեն լեզվով մշակված գործիքները և նյութերը մնում են խիստ սահմանափակ:
- ՍՁ ոլորտի վերաբերյալ իրազեկվածությունը և գիտելիքների մակարդակը դեռևս ցածր է պետական համակարգի ներկայացուցիչների, լրագրողների և այլ ոլորտների ներկայացուցիչների շրջանում:
- Կրթական ոլորտում ՍՁ որոտի զարգացմանն ուղղված ջանքերը դեռևս համակարգված չեն և համակարգային փոփոխությունների անհրաժեշտություն կա:

Զարգացման ուղղություններ

- Համալսարանական ֆորմալ կրթության շրջանակներում ավելացնել գործող ՍՁ-ներում ուսանողների՝ ուսումնական պրակտիկա անցնելու հնարավորությունները:
- ՍՁ կրթության տարածման միջոցով խթանել համայնքների զարգացումը և գործող հաջողված օրինակների միջոցով մոբիլիզացնել համայնքների պասիվ բնակիչներին՝ նրանց ներառելով գործընթացներում որպես առանցքային և հավասարազոր դերակատարներ:
- Ֆորմալ և ոչ ֆորմալ կրթական ծրագրերի միջոցով ուսումնառողների շրջանում զարգացնել նորարարությունը և ստեղծարար մտածելակերպը՝ որպես ՍՁ ոլորտի առաջընթացի նախապայման:
- Հաշվի առնել ՍՁ կրթության բազմաշերտությունը՝ ներառելով էկոհամակարգի 2 շերտերը՝ համայնքային և հանրապետական: ՍՁ կրթությունը ավելի շատ մոտեցնել համայնքներին՝ ստեղծելով շահակիցների կոորդինացիոն հարթակներ, որոնք առաջ կմղեն ՍՁ-ի զարգացումը: